Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սովորողի արժեհամակարգի ձևավորումը «Գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Ազատյան Գայանե

Բովանդակություն

Ներածություն _____ 3

Գլուխ I. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը _____ 4

Գլուխ II. «Գրականություն» առարկայի դերը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում _____ 7

2.1. Ժամանակակից մեթոդների կիրառումը գրականության դասին _____ 8

2.2. Գրական ցերեկույթները և միջոցառումները՝ որպես սովորողի արժեհամակարգի ձևավորման մաս _____ 12

2.3. Այցելություններ թանգարաններ, դրանց դերը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում _____ 13

2.4. Հայրենաճանաչ էքսկուրսիաները սովորողի արժեհամակարգի կարևորագույն մաս 14

Եզրակացություն _____ 17

Օգտագործած գրականության ցանկ _____ 18

Ներածություն

Յուրաքանչյուր ուսուցիչ իր աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպում է տարբեր խնդիրների, հայտնվում տարբեր իրավիճակներում, որոնք անմիջականորեն անդրադառնում են իր ուսուցչական աշխատանքի վրա: Հետազոտող ուսուցիչը կարողանում է վերլուծել տվյալ պահը, իրավիճակը, խորամուխ լինել ծագած խնդիրների մեջ և գտնել համապատասխան լուծումներ:

Հետազոտության միջոցով ուսուցիչը կարող է հասնել ցանկալի արդյունքի՝ հաղթահարելով ծագած խնդիրները: Այդ ճանապարհին, իհարկե, կլինեն նոր և հետաքրքիր բացահայտումներ, որոնք կնպաստեն ուսուցչի կատարելագործմանը և արդյունավետ աշխատանքին:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում (19 տարի) ես նույնպես հանդիպել եմ բազմաթիվ խնդիրների, որոնք փորձել եմ հնարավորինս հաղթահարել: Ունեցել եմ դժվար խոսող, դժվար շփվող, բարդույթներ ունեցող, ինքնամփոփ, նյարդային տարբեր խնդիրներ ունեցող, սովորել չցանկացող, վարքային տարբեր շեղումներ ունեցող աշակերտներ: Նրանց կողքին սովորել են նաև ակտիվ և կրթության հանդեպ մեծ սեր ունեցող աշակերտներ: Կրթական գործընթացում մշտապես կարևոր և առաջնային եմ համարել, սովորողի արժեհամակարգի ձևավորումը, որովհետև ուսուցիչը կերտում է իր հայրենիքի, ազգի, ընտանիքի, շրջապատող միջավայրի համար հայեցի դաստիարակություն, ազգային գիտակցություն ունեցող, բանիմաց անհատ, որը կրում է նաև համամարդկային արժեքներ:

Հետազոտության տվյալների հավաքագրումը կատարել եմ Անտիկյան կրթարանի 5-9-րդ դասարաններում (60 աշակերտ):

Սովորողի արժեհամակարգի ձևավորման վերաբերյալ հետազոտությունը կատարել եմ սիրով: Աշխատանքային գործունեության մոտ 20 տարիների ընթացքում ևս կարևոր եմ համարել աշակերտ-անհատի ձևավորումը, ով իր մեջ կկրի բարձր որակներ:

Այս հետազոտական աշխատանքի միջոցով կներկայացնեմ տարբեր հնարավոր միջոցներ, ճանապարհներ, որոնք «Գրականություն» առարկայի միջոցով կձևավորեն սովորողի արժեհամակարգը:

Սովորողի արժեհամակարգի ձևավորումը պետք է լինի ժամանակակից դպրոցի գերխնդիրը: Այն մշտապես պետք է լինի բոլոր ծնողների և մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Գլուխ I. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը

Արժեհամակարգը յուրաքանչյուրի հոգևոր, իմացական, բարոյական, գեղագիտական, մշակութային, էթնիկական արժեքների ամբողջությունն է, որը նպաստում է անձի բազմակողմանի և ներդաշնակ ձևավորմանը: Արժեքային կողմնորոշիչների համակարգը պետք է ներդաշնակ լինի. այն մարդու կենսական աշխարհն է, աշխարհի պատկերն իր ընկալմամբ:

Արժեքները մարդկանց գիտակցության մեջ դիրքորոշումների ձևավորման և պահպանման հիմքն են: Դրանք օգնում են մարդուն կոնկրետ դիրք գրավել, արտահայտել իր տեսակետը, տալ գնահատական: Մարդու վարքը և գործունեությունը բացահայտում են այն արժեքները, որոնք նա կրում է:

Արժեհամակարգի ձևավորման գործում հանրակրթության մեջ կարևոր դեր ունեն ուսումնական բոլոր առարկաները: Կարծում եմ այդ առարկաներից անգնահատելի դեր ունի «Գրականություն» առարկան:

Սույն աշխատանքում ներկայացված են այն վարկածները, որոնց օգնությամբ կարելի է լուծել հետազոտական աշխատանքի խնդիրը՝ ինչպես ձևավորել սովորողի արժեհամակարգը «Գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում.

- Դասապրոցեսի ընթացքում բարոյահոգեբանական, մանկավարժական ճիշտ մոտեցմամբ ներկայացնել գրական կերպարներին: Բազմակողմանի վերլուծության հնարավորություն տալ աշակերտներին, որպեսզի զգան և ճանաչեն իրավիճակը և գործող անձանց:
- Ժամանակակից տարբեր մեթոդների կիրառմամբ նպաստել աշակերտների մտքերի ազատ արտահայտմանը, թույլ տալ ինքնուրույն վերլուծել և մտածել թեմայի վերաբերյալ:
- Ձևավորել ճաշակ և նոր գիտելիքներ հաղորդել գրական ցերեկույթների և տարաբնույթ միջոցառումների միջոցով:
- Այցելություններ թանգարաններ և տարբեր տեսարժան վայրեր:

Սովորողի արժեքային կողմնորոշիչների համակարգի մոդելի համաձայն՝ առանձնացվում է 3 հիմնական գործընթաց՝ ադապտացիա, սոցիալականացում և անհատականացում [Տ. Ազատյան, Հ. Բաբայան «Անչափահաս իրավախախտի հոգեբանություն», էջ 61]: Խնդրի լուծման համար անպայմանորեն սրանց պետք է ավելանան նաև արժեհամակարգի ձևավորման մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ:

- Օբյեկտիվ գործոններ՝ ընտանիք, դպրոց, միջավայր, հասարակական երևույթներ և այլն:
- Սուբյեկտիվ գործոններ՝ հուզականություն, հուզական դիրքորոշում, վերաբերմունք, բարոյագիտակցություն, իրավագիտակցություն, միջանձնային հարաբերություններ և այլն:

Նշված գործոններից հարկ եմ համարում առանձնացնել հատկապես դպրոցի և ընտանիքի դերը, որովհետև թե՛ մեկը, թե՛ մյուսը պատկանում են անփոխարինելի արժեքների թվին:

Ընտանիքն այն առաջնային սոցիալական հիմնքն է, որը ձևավորում է անձնավորության բարոյական և հոգեկան կերտվածքը [Տ. Ազատյան, Հ. Բաբայան «Անչափահաս իրավախախտի հոգեբանություն» էջ 63]: Ընտանիքը կարևորագույն նշանակություն ունի երեխայի անձի ձևավորման և զարգացման գործում: Երեխայի հետագա կյանքը, ճակատագիրը, դիրքորոշումը շրջապատողների և սեփական անձի նկատմամբ կախված է ընտանիքում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտից: Ընտանիքում երեխան հաղորդակցվում է կյանքի հետ, այդտեղ է դրվում աշխարհընկալման հասկացման հիմքերը: Երեխան ընտանիքում է սկսում յուրացնել բարոյական արժեքներ, սոցիալական նորմեր, հասարակական, մշակութային ավանդույթներ, դիրքորոշումներ: Երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում հավասարապես կարևոր է ծնողներից յուրաքանչյուրի դիրքորոշումը կյանքի, մարդկանց, շրջապատող աշխարհի և այլնի հանդեպ: Երեխայի հոգեկան և անձնային զարգացումը ձևավորվում է հենց այստեղ:

Ընդունելով այս ամենը՝ պետք է ասել, որ սովորողների արժեքների ձևավորման հարցում չափազանց կարևոր տեղ ունի ուսումնական հաստատությունը, որտեղ էլ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով կարգավորվում են այս խնդրին վերաբերող տարբեր հարցեր: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում անձի ձևավորման գործում [Բաբանսկի Յու. Կ. , Պոբեդանոսցև Գ. Ա. , «Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում», էջ 12]:

Երեխաների արժեքների ձևավորման գործում մանկավարժների դերն անչափ կարևոր է:

Հետազոտության ընթացքում հատկապես հետաքրքիր է ուսումնասիրել դեռահասների արժեհամակարգի ձևավորումը: Դեռահասի հոգևոր աշխարհի մասին կարելի է դատել այն բանից, թե ինչ նպատակների հասնելու համար է իր ջանքերն ուղղում, ինչն է նրա համար առավել կարևոր, ինչ հետաքրքրություններ և պահանջմունքներ ունի, հոգևոր զարգացման ինչ մակարդակի վրա է:

Այս ամենից էլ հենց կախված է մեր հասարակության ուղին և զարգացումը: Ուստի ես՝ որպես գրականության ուսուցչուհի, իմ պարտքն եմ համարում գրականության դասավանդան միջոցով կերտել այնպիսի անհատ, ով կունենա ազնիվ մղումներ, ազատ կամք, կլինի ազգասեր և հայրենասեր, արդարամիտ և կրթված, բարձր կգնահատի մարդկային հարաբերությունները և կունենա միայն բարձր որակներ:

Գլուխ II. «Գրականություն» առարկայի դերը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում

Սովորողի դաստիարակության գործընթացն այսօր ընթանում է բազմաթիվ հանգամանքների ազդեցության ներքո: Դրանք են՝ ընտանեկան, կրթական, սոցիալական, ազգային, մշակութային, հասարակական և այլն:

Հատկապես այս օրերին կարևոր է, որ ժամանակակից մանկավարժությունն իր առջև խնդիր դնի բարձրացնել սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հենքի վրա: Իհարկե, անհրաժեշտ է չանտեսել նաև համամարդկային արժեքները: Ընդհանրապես աշակերտն այս ամենի արդյունքում հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև անհատականություն:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի իր ընկալումը: Սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, բարոյահոգեբանական գծերն ու վարքը դրսևորվում են՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից:

Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակությունը դրսևորվում է աշակերտի շփման և վարքի որոշակի մակարդակում, այսինքն՝ արտաքին տեսքում, խոսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, նրանց ապրելակերպում:

Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդում են նաև միջանձնային հարաբերությունները կամ յուրաքանչյուրի համար հեղինակավոր մարդկանց (ծնող, ուսուցիչ, ընկեր, քույր կամ եղբայր և այլն) հետ շփումները: Աշակերտի համար հեղինակավոր անձ կարող է լինել նաև դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը: Աշակերտը իր համար հեղինակավոր մարդուց կարող է վերցնել ինչպես դրական, այնպես էլ բացասական օրինակներ: Ընդ որում՝ դպրոցահասակ երեխան բացասականն ավելի հեշտ է վերցնում, քան դրականը, ինչը կարող է անդառնալի հետևանք ունենալ անձի արժեհամակարգի ձևավորման վրա: Հետևաբար մանկավարժական լուրջ վերահսկողություն է անհրաժեշտ: Ուսուցիչը հնարավորություն ունի առարկայական ծրագրերի յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել բարոյական, գեղագիտական, դաստիարակչական, մշակութային ազգային և այլ շատ արժեքներ, գիտելիքներ, վերաբերմունք:

Սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում բացառիկ տեղ ունի «Գրականություն» առարկան: Այն սերունդ դաստիարակելու, մարդկային բարձր որակներով նրանց զինելու, հոգևոր արժեքներ ճանաչելու և գնահատելու, գեղագիտական ճաշակ ձևավորելու գործում անգնահատելի դեր ունի:

Դպրոցականների դաստիարակությանը բնորոշ է հակումը դեպի մշակույթի որոշակի շերտեր, կենցաղին բնորոշ արժեքների աստիճանակարգում: Այստեղ շատ կարևոր է ուսուցչի դերը: Անհրաժեշտ է աշակերտների մեջ ձևավորել կյանքի նկատմամբ դրական վերաբերմունք, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում, ապրելու ունակություն:

Ըստ իրենց տարիքային, սեռային և անհատական առանձնահատկությունների՝ աշակերտները հակված են նույնացնել իրենց այս կամ այն կերպարի հետ՝ յուրացնելով նրանց ապրելակերպը, հագուստը, կյանքի հանդեպ վերաբերմունքը, վարքը և այլն:

Առանձնացնենք մի քանի տարբերակներ, որոնք կիրառում եմ «Գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում:

2.1. Ժամանակակից մեթոդների կիրառումը գրականության դասին

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդներն օգնում են աշակերտին ստացած գիտելիքները կյանքում նպատակային օգտագործելու համար:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական տարբեր խնդիրներ: Յուրաքանչյուր դասի ընթացքում հաշվի եմ առնում ոչ թե մեկուսացած կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների և կարողությունների, կամքի, բնավորության, զգացմունքների, արժեքային որակների, ինչպես նաև հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Գրականության դասավանդման ընթացքում առարկայական ծրագրերից առանձնացնում եմ ընդհանուր դաստիարակչական խնդիրներ: Ընտրում եմ թեմային առավել հարմար մեթոդներ, որոնց միջոցով առավելագույնս կկարողանամ նպաստել աշակերտի արժեհամակարգի կերտմանը:

Եթե աշակերտը անհատական աշխատանքում կարողանում է ցույց տալ իր ինտելեկտուալ պատրաստվածությունը, ապա *խմբային աշխատանքի* ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել և ընդօրինակել միմյանց: Ընկերների հետ աշխատելիս աշակերտն ավելի ազատ է արտահայտում մտքերը և դատողությունները, անկաշկանդ է, ինչը թույլ է տալիս ավելի արդյունավետ դարձնել դասը: Այս ամենը թույլ է տալիս ավելի հեշտ նկատել դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, նրանց ինքնահաստատվելու և հասուն երևալու ձգտումը: Այստեղ պետք է լինել ավելի նրբանկատ, ուշադիր և համբերատար:

Հետազոտության ընթացքում կիրառելով ուսուցման տարբեր ժամանակակից մեթոդներ՝ փորձել եմ ավելի ճիշտ ընկալել աշակերտներիս, հասկանալ նրանց և փորձել կերտել նրանց մեջ բարձր որակներով անհատների:

Համագործակցային մեթոդներից ներկայացնում եմ հետևյալ օրինակը.

«Աշխատանք կենտրոններով»

Այս մեթոդը կիրառեցի 7-րդ դասարանում: Այն շատ տպավորիչ է, և հետաքրքրված էին բոլորը: Գրականության դասին Ե. Չարենցի կյանքը և ստեղծագործություններն էինք քննարկում: Ըստ մեթոդի՝ ունեինք 4 կենտրոն.

- Բացահայտողների կենտրոն - Աշակերտներից երկուսը ներկայացրին Չարենցի կյանքին վերաբերող կարճ զեկույց: Պատմեցին գրողի ծննդավայրից, ընտանիքից, կրթությունից, ստեղծագործական կյանքից:
- Հետազոտողների կենտրոն - Աշակերտները լրացուցիչ գրականությունից ներկայացրին հետաքրքիր փաստեր գրողի կյանքից:
  Պետք է նշել, որ այս խմբում ընդգրկել էի միայն տղաների, ովքեր զարմանալի ձևով հետաքրքրված էին առաջադրանքով և Չարենցի կյանքով: Ներկայացված նյութերը նաև վերլուծեցին՝ արտահայտելով իրենց վերաբերմունքը:
- Ստեղծագործողների կենտրոն - Այս խմբի աշակերտները ներկայացրին 4 որպեսնոց դերախաղ, որտեղ ներկա էին Չարենցը, կինը, ընկերները:
- Գրավոր աշխատանքների կենտրոն - Այս խմբի սովորողներն առանձնացրել էին շուրջ 50 բառ և արտահայտություն, որոնք գործածել էին նախորդ խմբերը:

Այս մեթոդով անցկացրած դասի ավարտին ամենատպավորիչն այն էր, որ աշակերտները զանգը հնչելուց հետո անգամ շարունակում էին քննարկել և վերլուծել առանձին դրվագներ գրողի կյանքից:

Վստահաբար կարող եմ ասել, որ դասն արդյունավետ էր և ընդամենը 12 տարեկան սովորողի արժեհամակարգում շատ կարևոր դեր ունեցավ: Կարողացան ընկալել գրողի ապրած ժամանակաշրջանը, քննադատեցին տարբեր արատավոր երևույթներ, խոսեցին ազգասիրությունից և մարդկային ազնիվ մղումներից:

Հաջորդ մեթոդով հետազոտությունը կրկին 7-րդ դասարանում անցկացրի:

«Հերոսի ուղին գծագրի տեսքով»

Աշակերտները Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքից Հաճի Աղայի կերպարն էին ընտրել: Ըստ աշակերտների տպավորիչ էր այն ուղին, որով անցել էր Հաճի աղան: Կերպարի բոլոր գծերը քննարկեցին, ինչի արդյունքում պատկեր շատ անսպասելի էր, բայց նաև՝ հետաքրքիր:

Գտնվեցին աշակերտները (2 աշակերտ), ովքեր արդարացնում էին Հաճի աղայի քայլերը: Մյուսներն ընդդիմացան և ամեն կերպ փորձում էին ապացուցել, որ կերպարը բացարձակապես բացասական է: Քննակումը բուռն ստացվեց, ինչը նույնպես նրանց համար որոշակի արժեքների ձեռքբերման հնարավորություն էր:

Այստեղ հենց թերևս պարզ երևաց դեռահասների խառնվածքի, վարքի, հայացքների, իդեալների բազմազան ձևեր:

Հետաքրքիր էր նաև «Արևելյան շուկա-գաղափարների շուկա» մեթոդը:

Այս մեթոդը կիրառել եմ հատուկ այն նպատակով, որ 5-9-րդ դասարանների աշակերտները «Մայրենի» և «Գրականություն» առարկաների դասապրոցեսի ընթացքում ներկայացնեն խնդրի լուծման իրենց տարբերակները: Այն շատ արդյունավետ էր նաև ավելի լավ ճանաչելու սովորողների գաղափարները, նրանց աշխարհընկալումը, թե ինչ հոգևոր, մշակութային, ազգային արժեքների կրող են նրանք:

Ներկայացնեմ այս մեթոդի կիրառման մեկ օրինակ:

Ինչպես աշակերտի բառապաշարից հանել օտարալեզու և ժարգոնային բառերը

Հարցման մասնակից	Դասարան	Նախընտրած առարկա	Խնդրի լուծման առաջարկ
Մարի	5-րդ	Մայրենի, անգլերեն	Շատ ընթերցել, հետևել ուսուցչի խոսքին
Նարե	5-րդ	Մայենի	Շատ ընթերցել, հետևել ուսուցչի ուղղումներին, հաճախել թատրոն
Էդուարդ	5-րդ	Չունի նախընտրած առարկա	Կարելի է խոսել նաև ժարգոնային բառերով
Անահիտ	5-րդ	Մայրենի, կերպարվեստ	Շատ ընթերցել, հետևել ուսուցչի խորհուրդներին
Վահե	6-րդ	Մաթեմատիկա, անգլերեն	Դիտել ուսուցողական հաղորդումներ
Սևակ	6-րդ	Բոլոր առարկաները	Շատ ընթերցել և լավ սովորել մայրենի լեզուն

Արթուր	6-րդ	Ռուսաց լեզու, անգլերեն	Կարելի է նաև գրական չխոսել
Արամ	6-րդ	Գրականություն, անգլերեն	Շատ ընթերցել, հաճախ այցելել թատրոն, մասնակցել գրական ցերեկույթների
Դիանա	6-րդ	Մայրենի	Ընթերցել հայ և արտասահմանյան գրականություն
Էլեն	7-րդ	Գրականություն, ռուսաց լեզու	Շատ ընթերցել, հետևել հայերենի ուղղախոսական կանոններին
Գագիկ	7-րդ	Բոլոր առարկաները	Շատ ընթերցել, դիտել հայալեզու ֆիլմեր
Էվելինա	7-րդ	Հայոց լեզու, գրականություն, պատմություն	Ընթերցել
Ալեքս	7-րդ	Աշխարհագրություն, պատմություն, գրականություն	Ընթերցել, առօրյա խոսքում հետևել ընտրած բառերին
Ռաֆայել	8-րդ	Չունի նախընտրած առարկաներ	Խոսել այնպես, ինչպես ստացվում է
Մարի	8-րդ	Գրականություն, անգլերեն, ռուսերեն	Շատ ընթերցել
Էլեն	9-րդ	Բոլոր առարկաները	Հետևել ուղղախոսական կանոններին, շատ կարդալ, մասնակցել տարբեր գրական միջոցառումների

Մեթոդը կիրառելու համար ընտրել եմ այսպիսի հարցադրում՝ կարևորելով հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներում տեղ գտած լեզվական գրագիտության կարողունակությունը: «Սովորողները տիրապետում են հայոց լեզվի, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական

կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը… Սովորողները ընդունակ են բանավոր և գրավոր ձևով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր, կարծիքներ» [ՀՊՉ]:

Այսպիսով՝ գրականության և մայրենիի դասապրոցեսի բազմաթիվ մեթոդների ճկուն և նպատակային կիրառումը մեծ ազդեցություն է թողնում սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում:

2.2. Գրական ցերեկույթները և միջոցառումները՝ որպես սովորողի արժեհամակարգի ձևավորման մաս

Գրական ցերեկույթները և միջոցառումները գրականության ուսուցչի աշխատանքի անբաժանելի մասն են կազմում: «Գրականություն» առարկայի դասավանդման կարևորագույն խնդիրներից է սովորողի արժեհամակարգի ձևավորումը: Ուստի նրա արժեքային համակարգը անպայմանորեն փոփոխության է ենթարկվում միջոցառումների արդյունքում:

Հաճախ ենք դասարանում հանդիպում այնպիսի աշակերտների, ովքեր առաջին հայացքից թվում է, թե անտարբեր են գրական, մշակութային որևէ նախաձեռնության հանդեպ: Սակայն պետք է նշեմ, որ այդ նույն աշակերտը կարող է ակտիվորեն մասնակցել գրական միջոցառումներին: Փորձը ցույց է տալիս, որ նման աշակերտների ներգրավվածությունը միջոցառումներին, նրա արժեհամակարգում ստեղծում է բազմաթիվ նոր և բարձր որակներ:

Միջոցառումների նյութը, բովանդակությունը, վեր հանվող թեմաները, դահլիճի կամ դասասենյակի կահավորումը, երաժշտության, հագուստի ընտրությունը, նախապատրաստական բոլոր աշխատանքները աշակերտների համար ունենում են դաստիարակչական մեծ նշանակություն:

Սովորաբար ես փորձում եմ այս աշխատանքը կատարելիս աշակերտներին ևս մասնակից դարձնել: Այդպիսով նրանք տեսնում և զգում են՝ ինչն է ավելի գեղեցիկ, ավելի հարմար, ավելի բովանդակալից և ներկայանալի, ավելի ճաշակով և նպատակային ընտրված: Ամեն մանրուք այստեղ կարևոր է՝ որակյալ աշխատանք կատարելու համար: Երբ աշակերտը տեսնում է այդ ամենը, անշուշտ ինքն էլ ձգտում է ավելիին:

Այն նույն աշակերտը, որ թվում էր՝ անտարբեր է, պետք է խանդավառվի ուսուցչի կատարած աշխատանքից և ձգտի լավագույնին: Երբ ուսուցիչը կարևորում է յուրաքանչյուր աշակերտի, նրա կատարած աշխատանքը, աշակերտն անում է

անհնարինը, որպեսզի հակառակ կարծիք չստեղծվի: Մենք ուսուցիչներս դառնում ենք սովորողի արժեհամակարգի կերտման կարևոր դերակատարը:

Այստեղ կարող եմ բերել իմ անցկացրած վերջին գրական ցերեկույթի օրինակը՝ «Մեծ Կարսեցին»: Եղիշե Չարենցի մասին պատմող այս ցերեկույթն այնքան տպավորիչ էր երեխաների համար, որ իրենք էին արդեն անում նոր և հետաքրքիր առաջարկներ: Շատ կարևոր էր, որ աշակերտներն ամբողջությամբ ընկալել էին այն, ինչ անում էին, որ միջոցառման նյութից բացի սովորում էին բազմաթիվ բանաստեղծություններ և ընթերցում մեծ գրողի մասին պատմող տարբեր նյութեր: Այսինքն՝ սովորողը ընկալել է ժամանակաշրջանը, ընալել է գրողի հայացքները, ստեղծագործությունները, կարողացել է յուրացնել ու նաև սիրել այդ ամենը, ինչի արդյունքում էլ իր կերպարով հիացրել է հանդիսատեսին:

Վստահ կարող եմ ասել, որ այս ամենն ազդել է սովորողի արժեհամակարգի վրա: Աշակերտներից ոմանք գրականության աշխարհում գտնում են իրենց, սկսում վերլուծել սեփական քայլերը, աշխարհն ընկալել այլ կերպ, իրենց համար ձեռք բերել նոր արժեքներ և նոր որակներ:

2.3. Այցելություններ թանգարաններ, դրանց դերը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում

Ինչ տարիքում էլ լինենք, կարծում եմ՝ կարևոր են այցելությունները թանգարաններ: «Գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում չենք կարող չանդրադառնալ այդ այցելություններին, որոնք նույնպես ազդում են սովորողի արժեհամակարգի ձևավորման վրա:

Այստեղ անհրաժեշտ է դիտարկել սովորողների մշակութային կարողունակությունները և դրանց դերը արժեհամակարգի ձևավորման գործում:

«Մշակութային կարողունակություն. սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ, ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական

պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելու մշակութային գրագիտություն և ճաշակ» [ՀՊՉ]:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որը աշակերտի մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Պետք է նշել, որ կարևոր է ոչ միայն հայ գրողների կամ մշակութային գործիչների թանգարաններ այցելելը, նաև համաշխարհային մշակույթի ներկայացուցիչների:

Գրականության յուրաքանչյուր ուսուցիչ պետք է փորձի հնարավորինս շատ կազմակերպել թանգարանային այցեր՝ այդպիսով ընդլայնելով սովորողի աշխարհայցքը: Յուրաքանչյուր այցից սովորողը նոր արժեքներ կվերցնի իր համար, կտեսնի և կզգա գրականության ուժը մարդկային մտքի և հոգու վրա: Թե՛ գրողների, թե՛ նկարիչների, թե՛ երաժիշտների, թե՛ մշակութային այլ գործիչների հատկապես տուն-թանգարանները փայլուն ներգործում են սովորողի ինքնաճանաչողական, հոգևոր և մշակութային, ազգային արժեքների վրա:

Դպրոցական դասագրքերի նյութը կամ տեսաֆիլմերը, ուսուցչի պատմածը որքան էլ հետաքրքիր լինեն, միևնույնն է, թանգարանում գտնվելը, տեղում լսել որևէ հանճարի մասին բոլորովին այլ տպավորություն է թողնում աշակերտի վրա: Այն շունչը, որը նա զգում է թանգարանում, կարող է հիմնովին փոխել նրա վերաբերմունքը կյանքի տարբեր երևույթների հանդեպ:

Թանգարանում հաճախ աշակերտները չեն կարողանում իրենց ճիշտ դրսևորել: Թանգարան (ինչպես նաև գրադարան, թատրոն) այցելելու մշակույթը երեխան պետք է սովորի վաղ տարիքից: Այդ հարցում պետք է ակտիվ լինի թե՛ ծնողը, թե՛ ուսուցիչը:

Նշանավոր մարդկանց տուն-թանգարաններ այցելելիս աշակերտները հաճախ այնքան են ոգեշնչվում, որ իրենց մի պահ զգում են նրա ժամանակակիցը, ընկերը, բարեկամը, հյուրը այդ տանը: Այս ամենը, անշուշտ, իր դրական հետևանքներն է թողնում սովորողի արժեհամակարգի ձևավորման վրա:

2.4. Հայրենաճանաչ էքսկուրսիաները՝ սովորողի արժեհամակարգի կարևորագույն մաս

«Գրականություն» առարկայի դասավանդման կարևոր խնդիրներից է հայրենաճանաչությունը, ինչը սովորողի արժեհամակարգի ձևավորման ևս մեկ կարևոր գործոն է:

Հետազոտելով էքսկուրսիաների միջոցով հայրենիքը ճանաչելու ճանապարհը՝ վստահ կարող եմ ասել, որ սովորողի աշխարհայացքի ձևավորման հարցում այն բացառիկ տեղ ունի: Այդ էքսկուրսիաների ընթացքում աշակերտը ճանաչում է իր հայրենիքի ամեն անկյունը, ամեն քար ու թուփ: Հայրենի հողի վրա կառուցված յուրաքանչյուր եկեղեցի իր խորհրդով լցնում է նրա հոգևոր աշխարհը, ամեն տեսարժան վայր դրոշմվում է նրա հոգում և մտքում: Հայրենի բնաշխարհի գեղեցկությունն ու այդ բնաշխարհին ավելի մոտ լինելը օգնում է աշակերտին զգալ գրականության դասին ընթերցած ամեն տաղն ու տողը:

Գրականության ուսուցչի խնդիրներից է սաների հոգում սերմանել սեր դեպի հայրենի բնաշխարհը, դեպի հայրենիքի ամեն անկյունը: Նա պետք է կարողանա անել ամեն բան, որ աշակերտը գիտակցի, որ արժեքների բուրգի գագաթին է գտնվում նվիրական և մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացում դաստիարակելը:

Հայրենասիրությունը և՛ հայրենի բնաշխարհը ճանաչելն է, և՛ ամեն ճարտարապետական կոթող ճանաչելն է, և՛ հայրենի մշակույթը ճանաչելն է, և՛ ազգային հոգևոր և մշակութային դաստիարակ ունենալն է:

Գրականությունը բացառիկ ձևով է օգնում ճանաչել մեր հայրենիքը: Այն ավելի տպավորիչ և ուսանելի է դառնում, երբ աշակերտը հաճախ է մասնակցում էքսկուրսիաների: Բակունցի և Թումանյանի աշխարհը ճանաչելու լավագույն տարբերակ է լինել նրան հայրենի վայրերում:

Իհարկե, սա հաճախ դժվար է կազմակերպել, սակայն դպրոցը ևս պետք է այս հարցում օգնի ուսուցչին: Աշակերտներին միշտ հաճելի է լինել հայրենիքի տարբեր վայրերում, և ուսուցիչն ու դպրոցն անպայման պետք է օգնեն նրան: Այդ էքսկուրսիաները սովորողի արժեհամակարգում նոր արժեքներ են ձևավորում, նրա մեջ արթնացնում են սեր դեպի հայրենիքը, հայրենասիրական ոգին են բարձրացնում, կարևորում են ազգային արժեքներ, հայ մնալու և Հայաստան աշխարհը պաշտպանելու կարևորությունն են բացահայտում:
Այսօր և հավիտյան հայ ուսուցիչը, հատկապես հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչը իր արբազան պարտքը պետք է համարի աշակերտի արժեհամակարգում գերագույն տեղում պահել ազգային, հայրենասիրական գաղափարները:

Ինքս անում եմ ամեն բան, որ հայ աշակերտը լավ ճանաչի իր երկիրը, իր ժողովրդին, իր մշակույթը: Էքսկուրսիաները լավագույն միջոցներից են այս խնդրի լուծման համար:

Տվյալների հավաքագրում

Աշակերտների 30%-ը դժվարանում է ինքնուրույն աշխատել, 70%-ը ունի հետաքրքրությունների ավելի լայն շրջանակ և իմ ուղղորդմամբ կարողանում է հասկանալ և ընդունել նոր արժեքներ:

Գրական ցերեկույթներով հետաքրքրված է աշակերտների 60%-ը, թանգարաններով՝ 30%-ը: Աշակերտների 10%-ը ցանկանում է «Գրականություն» առարկան ուսումնասիրել միայն դասապրոցեսի ընթացքում: Գրականության դասին կիրառվող մեթոդները սիրում է աշակերտների 95%-ը:

Տվյալների վերլուծություն

1. Դասալսումներ այլ ուսուցիչների մոտ:
2. Խմբային քննարկումներ:
3. Վիկտորիաներ, գրական դատեր:
4. ՏՀՏ գործիքների կիրառում:

Եզրակացություն

1. Հետազոտական աշխատանքի արդյունքում ավելի որոշակի և պարզ դարձավ, թե ինչ խնդիրներ են խոչընդոտում առարկան ավելի լիարժեք մատուցելու, աշակերտներին մատչելի դարձնելու համար, ինչ արժեքների վրա է այսօր ձևավորվում անհատը, ինչպես կարող են կրթական ծրագրերը, տարբեր մեթոդներ, միջավայրը ազդել սովորողի արժեհամակարգի ձևավորման վրա:
2. Աշխատանքային գործունեության 19 տարիների ընթացքում (16 տարի Ալ. Շիրվանզադեի անվան համար 21 դպրոց, 3 տարի Անտիկյան կրթարան) դիտարկել եմ բազմաթիվ աշակերտների արժեհամակարգեր: Մշտապես զրուցել եմ աշակերտների հետ, ծանոթացել նրանց հետաքրքրություններին և նախասիրություններին, զրուցել նրանց ծնողների հետ, այլ առարկաների ուսուցիչների հետ:
3. Կատարված ուսումնասիրությունները և հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողի արժեհամակարգի ձևավորումը «Գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում պահանջում է մեծ և խորքային աշխատանք: Այն արդարացված է, քանի որ ակնհայտ են աշակերտի մտածողության, մտածելակերպի, կատարած աշխատանքի լուրջ փոփոխությունները: Սովորողների արժեհամակարգում նման աշխատանք կատարելուց հետո ի հայտ են գալիս նոր և բարձր որակներ, որոնց շնորհիվ նա հասարակության մեջ ավելի մեծ հարգանքի է արժանանում՝ որպես անհատ և քաղաքացի, որպես հայ մարդ:

Բոլոր այն ճանապարհները, որոնք օգնել են այսօրվա աշակերտի մեջ սերմանել բարձր որակներ, նրա աշխարհայացքը դարձնել ավելի լայն, օգնել տեսնելու ճիշտը, բարին, գեղեցիկը, վսեմը, արդարացված են:

Վստահաբար կարող եմ ասել, որ հետազոտական այս աշխատանքը կատարելու ճանապարհին ինքս արել եմ նոր բացահայտումներ և ոգեշնչել շատ աշակերտների:

Օգտագործած գրականության ցանկ

1. Տ. Ազատյան, Հ. Բաբայան «Անչափահաս իրավախախտի հոգեբանություն», Երևան 2021:
2. Բաբանսկի Յու. Կ. , Պոբեդանոսցև Գ. Ա. , «Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում», Երևան 1987:
3. Հանրակրթության պետական չափորոշիչ:
4. Հակոբյան Ն. Ռ. , Սարգսյան Վ. Ժ. , Արժեքային համակարգի այլափոխումները փոխակերպվող հասարակությունում, «Հոգեբանությունը և կյանքը», 2006 թիվ 12:
5. Аверин В. А., Психология личности, Уч. Пособие, СПБ 1999.